

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գրութիւն Մայր Աթոռի տպարանի վարչութեան անունով, որով պատուիրուեց ուղարկել Դիւան տպարանում եղած գրքերից երկ-երկու օրինակ՝ Արմաշի Դըպրեվանքի գրադարանին ուղարկելու համար։ Այս մասին յայտնուեց Դպրեվանքի տեսուչ Տ. Գարեգին վարդապետին։ 3. Օգոստ. թ. 1795—1796։

—3. Կոնդակ Աստրախանի Հայոց Կոնսիստորիայի անունով, որով պատուիրուեց նոյն թեմի Խայթա գիւղում քահանայագործող, Տաճկաստանում ձեռնադրուած, Ճանիկի վիճակի Էօքուզ գիւղացի Գրիգորիս քահանայ Գարաքեահեանին, վերադարձնել հայրենիք համաձայն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարքի գրութեան։ Օգոստ. 3. թ. 1799։

Գրութիւն Մայր Աթոռի վանական կառավարութեան նախագահ՝ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանդեանի անունով, որով յանձնարարուեց գնալ վանքապատկան Մաստարայ գիւղը՝ դպրոցական շինութեան գործը կարգադրելու։ Օգոստոս 5. թ. 1803։

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Կ. Պոլսոյ Պատրիարքարանից ստացուած բարեյիշատակ Յովհաննէս Կիւմշեանի կտակած գումարի ս. Էջմիածնին հասանելի 1909 թուի տոկոսները–99 ռուբ. 63 կոպ.։ Օգոստոս 7. թ. 1810։

Կոնդակ նոյն Սինոդի անունով, որով պատուիրուեց Մայր Աթոռի տպարանի նախկին գրաշար Սմբատ Ճուղուրեանին ամսական 10 ռուբլի նպաստ տալ։ Օգոստոս 9. թ. 1818։

Գրութիւն Թիւրքահայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով յանձնարարուեց Վասպուրականի նորընտիր առաջնորդ Տ. Յովսէփ արքեպիսկոպոս Սառաճեանին ճանապարհածախս ուղարկել, որպէս զի օր առաջ մեկնի իւր նոր պաշտօնավայրը։ Օգոստոս 11. թ. 1828։

Երջաբերական կոնդակներ Ռուսաստանի թեմական առաջնորդների անունով, որոնցով ուղարկուեցին Հայոց եկեղեցական–ծխական դպրոցների համար տպագրուած ծրագիրներ, և պատուիրուեց սոյն 1910/11 ուսումն. տարուանից այդ ծրագրով առաջնորդուել։ Օգոստոս 12. թ. 1838—1842։

Կոնդակ Շուշի քաղաքի ս. Աստուածածին եկեղեցու ծխական հոգաբարձութեան և անձնափոխանորդների անունով, որով հաստատուեցին իրանց պաշտօնում։ Օգոստոս 13. թ. 1852։

— Բանագուր գիւղի ս. Աստուածածին եկեղեցու ծխական հոգաբարձութեան անունով, որով հաստատուեցին իրանց պաշտօնում։ Օգոստոս 13. թ. 1853։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց Ժամհարեան եղբ. ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսին նուիրած 17,000 ռուբլուց մնացած 9949 ռուբլի 20 կոպ. որոշած ժամանակին ստանալ Երևանցի Հ. Գէորգեանի ժառանգներից և նրա տոկոսներով Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանում յիշեալ ժամ-

հարեանների անունով որդեգիր պահել։ Օգոստոս 13. թ. 1855։ Այս մասին յայտնուեց կոնդակով նոյն ժամհարեան եղբայրներին, 28 օգոստ. թ. 1921։

Գրութիւն Վանայ առաջնորդական փոխանորդ Մեսրոպ աւագ քահանայ Ճանիկեանի անունով, որով ուղարկուեց Զկոր գիւղացի Մատթէոս Տ. Ղազարեանի անունով տուած ժողովարարութեան վկայականը և պատուիրուեց, որ այսուհետև այլ ևս ոչ ոքի այդպիսի վկայականներ չտրուին։ Օգոստոս 16. թ. 1859։

Մակագրութիւն ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց փոխել տալ Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի էլեքտրական լուսաւորութեան ներկայ եղանակը և աւելի յարմարագոյն ձևով շինել։ Օգոստոս 16. թ. 1860։

Մակագրութիւն նոյն Սինոդի անունով, որով ուղարկելով Տաճկաստանի պետութիւնից, Վեհ, Կաթուղիկոսին Կ. Պոլսից Էջմիածին ուղեկցող՝ Տ. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանին, Աշոտ եպիսկոպոս Շախեանին, և Բաբգէն վարդապետ Աղաւելեանին շնորհած շքանշանների հրովարտակները՝ պատուիրուեց անել անհրաժեշտ կարգադրութիւն Ռուսաց պետութեան հաճութիւնն ստանալու՝ այդ շքանշանները կրելու համար։ Օգոստոս 16. թ. 1861։

Կոնդակներ Արմաւիր քաղաքի բնակիչներ Գաբրիէլ Այվազեանի, Բօրիս Կուսիկեանի, Պետրովսկի բնակիչ Գասպար Մանուէլեանի և Մոզդոկցի Մկրտիչ Կաժենիկեանցի անունով, որոնցով ուղարկուեցին չորս ժապաւինեալ մատեաններ՝ յորդորելով Էջմիածնի օգտին գանձանակ ժողովել, արձանագրել մատեաններում և տարուայ վերջին մատեանների հետ ուղարկել ս. Էջմիածնի Սինոդին, որտեղից նոր մատեաններ կստանան։ Օգոստոս 16. թ. 1863—1866։

Գրութիւն Ստաւրապոլ քաղաքի Կարապետ քահանայ Եագոյեանի անունով, որով յայտնուեց, թէ ստացուել են Մայր Աթոռին ուղարկած, գիւղական աղքատ եկեղեցիներին բաժանելու, հին եկեղեցական զգեստները։ Օգոստոս 17. թ. 1868։

Կոնդակ Կ. Պոլսի Ամենապատիւ պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանի անունով, որով յայտնուեց, թէ ստացուել են Կաթուղիկոսական հրաւիրակներին շնորհած շքանշանները և նոցա հրովարտակները, իսկ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեանի շքանշանը և հրովարտակը յետ ուղարկուեց, որովհետև նոյնպիսի շքանշան Մեսրոպ եպիսկոպոսը ստացել է 1893 թ. ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսին պատուիրակ գնացած ժամանակ։ Օգոստոս 17. թ. 1872։

Գրութիւն Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց մի ժապաւինեալ մատեան և պատուիրուեց մուծել այդ մատեանում զանազան տեղերից ուղարկուած եկեղեցական հին զգեստները, գիւղական աղքատ եկեղեցիներին բաժանելու համար։ Օգոստոս 18. թ. 1874։

Գրութիւն Բրմանստանի Ռանգուն քաղաքի Համբարձում քահանայ Վարդարեանի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց ս. Էջմիածնին նուէր ուղարկած 3 անգլիական ոսկու համար։ Օգոստոս 18. թ. 1875։

Գրութիւն Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի անունով, որով յանձնարարուեց տեղեկութիւն տալ Սուլտա գիւղի եկեղեցականծխական դպրոցին Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու կալուածների եկամտից նպաստ տալու խնդրի մասին։ Օգոստոս 19. թ. 1882։

Գրութիւն Եւրոպայի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի անունով, որով յանձնարարուեց տեղեկութիւն ժողովել պրոֆէսսոր Թումայեանից Սահակ և Առաքել Պետրոսեան Կարապետեանց որբերի մասին և հաղորդել Վեհափառ Հայրապետին որբերի հօրեղբօրը յայտնելու համար։ Օգոստոս 20. թ. 1888։

Կոնդակ Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Դիւանապետ Տ. Բաղրատ վարդապետի անունով,

որով կարգուեց ժամանակաւոր տեսուչ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի և յանձնարարուեց Էջմիածին հրաւիրել Ճեմարանի ուսուցիչներին՝ օգոստոսի 25-ին նորեկ աշակերտացուների և վերաքննութիւն ունեցող սաների հարցաքննութիւնն և ապա դասաւանդութիւնը սկսելու համար. խիստ հսկողութիւն ունենալ Ճեմարանի սաների կարգապահութեան, ուսումնական և տնտեսական խնդիրների վրայ։ Օգոստոս 22. թ. 1894։

Մակագրութիւն Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի անունով, որով յանձնարարուեց աշխատել յատկապէս Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան մօտ, որ օժանդակութիւն տրուի Անանուր գիւղի վիրախօս հայ հասարակութեան՝ ծխական դպրոց բանալու համար։ Օգոստոս 22. թ. 1904։

Կոնդակ Տ. Սերովբէ քահանայ Ներշապուհի անունով, որով կարգուեց Ամերիկայի Փրովիդէնսի հայ ժողովրդի հոգևոր հովիւ՝ նրանց հոգևոր պէտքերը հոգալու և կրթական ու այլ բարեգործական հաստատութիւնները կանոնաւորելու համար։ Օգոստոս 22. թ. 1907։

Գրութիւն Կ. Պոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանի անունով, Տփխիսեցի հանգուցեալ Կարապետ Վարդանեանի Մշու ս. Կարապետ վանքին կտակած 20,000 ռուբլու մասին (որ գտնուում է ս. Էջմիածնում) և յանձնարարուեց բանակցել Տարօնի առաջնորդի հետ այդ գումարն Անգլիական դրամատան մէջ շահեցնելու նպատակով և հետևանքի մասին շուտով զեկուցանել Նորին Սրբութեան։ Օգոստոս 22. թ. 1908։ Այս մասին յայտնուեց գրութեամբ Մշոյ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին։ Օգոստ. 22. թ. 1909։

Կոնդակ Տ. Մատթէոս քահանայ Մանուկեանի անունով, որով կարգուեց Ամերիկայի Ուստր քաղաքի հայ ժողովրդի հոգևոր հովիւ՝ Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի միջնորդութեան և Ազգային Կրօնական ժողովի ընտրութեան համաձայն։ Օգոստոս 28. թ. 1931։

Կոնդակ Զանգեզուրի գաւառի Գորիս քաղաքացիներ պ. պ. Միրզայ Ծատուրեանի, Հայրապետ Մելիք-Օհանեանի, Գրիգոր Միրումեանի, Ղազար Միլինցեանի, Իսաջան Պողոսեանի և Գալուստ Բաղիրեանի անունով, որով հաստատուեցին Գորիսի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնում։ Օգոստոս 28. թ. 1937։

Կոնդակ Աղէքսանդրապոլի ս. Աստուածածին եկեղեցու Արղութեան դպրոցի հոգաբարձութեան անունով, որով հոգաբարձութեան անդամները թողնուեցին իրանց պաշտօններում և յանձնարարուեց նոր ուսուցչական խումբ կազմել։ Սեպտ. 1. թ. 2950։

Այս մասին կոնդակով յայտնուեց Երևանի թեմ. խորհրդին. 1 սեպտ. թ. 1949.

Գրութիւն Մայր Աթոռի միաբան և Թիֆլիզի Էջմիածնապատկան կալուածների կառավարիչ Տ. Եփրեմ վարդապետի անունով, որով յանձնարարուեց յայտնել՝ թէ Երուսաղէմի վանքն ինչ կալուած ունի Թիֆլիզում, որքան արդիւնք է տալիս տարեկան և թէ յարմարութիւն ունի՞ նոր շէնք կամ խանութ կառուցանել՝ աւելի արդիւնաւոր դարձնելու համար և ներկայացնել ծախքի նախահաշիւը։ Սեպտեմբ. 3. թ. 1969։

Գրութիւն նոյն իմաստով Գանձակի Հայոց Հոգևոր կառավարութեան անունով։ Սեպտեմբեր 3. թ. 1970։

Գրութիւն Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանի անունով, որով մերժուեց Վանայ նահանգի Գրագում գիւղի Յովհաննէս քահանայ Ղազարեանի Ռուսաստանում քահանայագործութիւն անելը և պատուիրուեց անմիջապէս հայրենիք ուղարկել, Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի շրջաբերական կարգադրութեան համաձայն։ Սեպտեմբեր 3. թ. 1971։

Կոնդակ Ղարաբաղի Հալոց թեմական դպրանոցի հոգաբարձութեան անունով, որով բժշ. պ. Նիկողայոս Եարամիշեանը հաստատուեց դպրանոցի տեսչի պաշտօ-

նում, երեք տարի ժամանակով։ Սեպտեմբեր 3. թ. 1973։

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որով պատուիրուեց՝ ստանալ հանգուցեալ Աւետիս Ղուկասեանի կտակակատարները՝ պ. պ. Մնացական Յովհաննիսեան Խուսունցից և Պօղոս Ղուկասեանից հանգուցեալ Ղուկասեանի կտակած 60,000 ռուբլի դումարը և դնել պետական դրամատունը որպէս մշտական աւանդ, որի տոկոսները գործադրուելու են ուսանողների համար, որոնց կընտրեն Ազգիս Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը. այլ և ճշտութեամբ կատարել հանգուցեալ Ղուկասեանի վերջին կամքը՝ տոկոսների հաշիւը հրատարակելով ի գիտութիւն հայ հասարակութեան։ Այս մասին կոնդակով յայտնուեց վերև յիշուած կտակակատարներին. 6 սեպտ. թ. թ. 1990 և 1992։

Հայրապետական գոհունակութիւն եւ օրհնութիւն.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Կ. Պոլսի Սկիւտարի ս. Կարապետ եկեղեցու Թաղական Խորհրդի ատենապետի և անդամների անունով՝ վարժարանի կառուցման համար։ Օգոստոս 10. թ. 1823։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Կ. Պոլսեցի Լևոն Էֆէնտի Վ. Սեմերճեանի անունով Սկիւտար թաղում վարժարանի վերաշինութեան հիմնարկութիւնն իւր ծախքով սկսելու համար։ Օգոստոս 10. թ. 1824։

Գրութիւն Աստրախանի թեմի Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց Արմաւիր քաղաքացի պ. պ. Աղէքսանդր, Գաբրիէլ և Միքայէլ Թորոսեանց եղբայրներին ս. Էջմիածնի Մայր Տաճարի դպիրների շապկացու 560 արշին կտոր և 160 քոպացու նուիրաբերելու համար։ Օգոստոս 20. թ. 1887։

Գրութիւն աթոռապատկան Մաստարայ գիւղի ս. Յովհաննէս եկեղեցու ծխական հոգաբարձութեան անդամ

Զաքար Էլոյեանի անունով, որով Հայրապետական օրհնութիւն յայտնուեց՝ իւր սեպհական բնակարանը տեղի ծխական դպրոցի վերածելու համար, մինչև դպրոցի շինութեան աւարտումը։ Օգոստոս 22. թ. 1900։

Կոնդակ Զանգեզուր գաւառի Ճակատէն գիւղացի տիկին Նարինգիւլ Ղարախանեանի անունով, որով գոհունակութիւն և շնորհակալութիւն յայտնուեց, իւր հանդուցեալ ամուսնու յիշատակին նուիրաբերած՝ 100 ռուբլու համար։ Օգոստոս 28. թ. 1933։ Իսկ գումարը կոնդակով յանձնուեց Սինոդին արժեքումս դնելու։ Օգոստ. 24. թ. 1910։

Կոնդակ Աղէքսանդրապոլի գաւառի Մեծ–Ղարաքիլիսա գիւղացի Սարգիս Փաշայեան Եղիզարեանցի անունով, որով գոհունակութիւն և օրհնութիւն յայտնուեց՝ տեղական հայոց եկեղեցական–ծխական դպրոցին 2000 ռուբլի նուիրելու համար։ Օգոստոս 28. թ. 1934։

Կոնդակ Նոր–Բայազէտցի Հայրապետ Խաչատրեանի անունով, որով գոհունակութիւն և օրհնութիւն յայտնուեց՝ իւր սեպհական միջոցներով տեղական ծխական դպրոցական շէնքը կառուցանելու համար, որի համար նուիրել է 15,000 ռուբլի։ Օգոստոս 28. թ. 1935։

Կոնդակ Գօրիսեցի Միրզայ Ծատուրեանի անունով, որով գոհունակութիւն և օրհնութիւն յայտնուեց՝ տեղական դպրոցի շինութեան օգտին 3000 ռուբլի նուիրաբերելու համար։ Օգոստոս 28. թ. 1936։

Կոնդակներ օրհնութեան Աստրախանի թեմի Գէորգևսկի, Քերքի, Անդիժանի և Զարջոյի ծխական Հոգաբարձութիւնների անունով՝ այդ քաղաքներում նոր ծխական դպրոց բաց անելու առթիւ։ Սեպտեմբեր 1. թ. թ. 1951—1954։

Գրութիւն Գողթնեաց գործակալ Կարապետ քահանայ Տէր Յակոբեանի անունով, որով գոհունակութիւն և շնորհակալութիւն յայտնուեց Վերին–Ագուլիսցիներ՝ Խա-

չաբեաններին՝ մի հարիւր ռուբլի նուիրաբերութեան համար։ Սեպտեմբեր 3. թ. 1972։

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակ Եւդոկիայի առաջնորդակ. տեղապահ Տ. Արտաւազդ ծ. վարդապետ Գալէնտէրեանի անունով, որով Գ. Պոլսոյ հայոց Ամենապատիւ Պատրիարքի միջնորդութեան համաձայն վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց իւր հաւատարիմ ծառայութեան համար։ Օգոստոս 24. թ. 1912։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Օգոստ. 2. թ. 471։ Սինոդը լսելով, որ Տ. Փոխարքան յունիսի 19-ին հաստատել է Սինոդի հաշուապահի պաշտօնակատար Մինաս Մանուէլեանցին, որոշեց պատուիրել Մայր Աթոռի գանձապահին վճարել Սինոդի նոր նշանակուած հաշուապահ Մինաս Մանուէլեանցին ամսական քսան և հինգ ռուբլի Մայր Աթոռի գանձարանից ի յաւելուած իւր արքունուստ ստացած ռոճկի, սկսած յուլիսի 1-ից։ Այս յաւելեալ վարձատրութեան փոխարէն նոր հաշուապահը պարտաւոր է կատարել Սինոդիս բոլոր յանձնարարութիւնները, Մայր Աթոռի հաստատութեանց հաշիւները ստուգելու վերաբերութեամբ։

Օգոստ. 2. թ. 475։ Վեհափառ Հայրապետը թ. 1701, տարեւոյս յուլիսի 23-ին կոնդակով, յանձնել էր Սինոդին Պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանի աջհամբոյր տուած 500 ռ. Սինոդը որոշեց, որովհետև Վեհափառ Հայրապետի 1909 թ. հոկտեմբերի 7-ին, հմր. 112 կոնդակով ուղարկուած 2000 ռուբլու մասին արդէն ժամանակին կարգադրութիւն ա-